ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2026 թվականի N 112 - Ա

## ՄԱՐԶԻԿՆԵՐ ԴԱՆԻԵԼ ՄԵԼԻՔԻ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ, ՖԻՆՆ ԿԱՍՊԵՐ ԱԴԱՄ ԷՎԱՐՏ ՍՏԵՆԼԻԻ ԳԵՐԱԳՈՒՍՅԱՆԻՆ, ՎԱԴԻՄ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆԻ ԲԻՉԱԽՉՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ ու 2.1-ին ենթակետերով և 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականների անդամ հանդիսացող՝

1) Դանիել Մելիքի Աղբալյանին (ծնված՝ 1999 թվականի մարտի 12-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան փ., շ. 27, զինհաշվառումը՝ Երևանի N 2 Զ/Կ).

2) Ֆինն Կասպեր Ադամ Էվարտ Ստենլիի Գերագույանին (ծնված՝ 2007 թվականի հոկտեմբերի 28-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան փ., շ. 27, զինհաշվառումը՝ Երևանի N 2 Զ/Կ).

3) Վադիմ Արսենի Հարությունյանին (ծնված՝ 2005 թվականի սեպտեմբերի 8-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան փ., շ. 27, զինհաշվառումը՝ Երևանի N 2 Զ/Կ):

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Վահան Վարդանի Բիչախչյանին (ծնված՝ 1999 թվականի հուլիսի 9-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղանդիլյան փ., շ. 28, բն. 8, զինհաշվառումը՝ Շիրակի մարզի Զ/Կ)՝ ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N 68-Ա որոշմամբ՝ մինչև 26 տարին լրանալը՝ 09.07.2025 թ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ